

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ
ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ	5
II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	8
III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	10
IV. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	12
V. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ	24
VI. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	27
VII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	32

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը¹

Հաշվեքննիչ պալատի 2024 հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքը հաստատելու մասին» թիվ 108-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն:

Հաշվեքննության առարկան

Պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,
2. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,
3. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք,
4. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք,
5. «Գնումների մասին» ՀՀ օրենք,
6. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,
7. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք,
8. «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք,
9. ՀՀ կառավարության մայիսի 2017 թվականի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011

¹ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2024 թվականի նոյեմբերի 1-ից 2025 թվականի հունվարի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը²	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացվել համապատասխան մեթոդաբանությունների համաձայն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը:

² «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:

I.ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվեքննությամբ արձանագրված ուշագրավ փաստերն են.

- ՀՀ ներքին գործերի նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ կողմից «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ին հաշվետու ժամանակաշրջանում հատկացվել է 2,170,000.00 հազ. դրամ դրամաշնորհ: Հատկացումներն այդ նպատակով նախատեսված «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն դասակարգվել (պլանավորվել), վճարվել և հաշվետվություններում արտացոլվել են «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

Նշված անհամապատասխանությունը հանգեցրել է պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվության բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման վերը նշված հոդվածների 2,170,000.00 հազ. դրամի չափով խեղաթյուրման:

- Երևան քաղաքի և մարզային պարեկային ծառայությունների տրանսպորտային միջոցների շահագործման նպատակով օգտագործված հեղուկ վառելիքի համար ծախսվել է 1,353,213.81 հազ. դրամ: Հեղուկ վառելիքի ծախսը հիմնավորված է ճանաչվում տրանսպորտային միջոցների շահագործված լինելու հանգամանքը հավաստող երթուղային թերթիկների առկայության պարագայում, մինչդեռ՝ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում նշված ծախսը հիմնավորող երթուղային թերթիկներ չեն լրացվել (բացառությամբ Երևան քաղաքի պարեկային ծառայության ղեկավար կազմին ամրակցված 15 տրանսպորտային միջոցների):

- Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը 2024 թվականի ինն ամիսների հաշվետվություններում ավել է ցույց տրված 10,715 լիտրով, որը հանգեցրել է նույն ժամանակահատվածի ֆինանսական հաշվետվության փաստացի ծախսերի ցուցանիշի խեղաթյուրման՝ 5,250.24 հազ. դրամ գումարի չափով: Հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների տվյալ ցուցանիշի խեղաթյուրումը օրենսդրության համաձայն ազդեցություն չի կարող

ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա³:

- Նախարարության տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներ իրենց գործառույթները իրականացնում են նախորդ տարիների ընթացքում ձեռքբերված համապատասխան ծրագրային ապահովումների միջոցով, որոնք դրանց ձեռքբերման և շահագործման ընթացքում որպես ոչ նյութական հիմնական միջոցներ չեն ճանաչվել և հաշվապահական հաշվառմամբ չեն հաշվառվել: Հաշվետու ժամանակաշրջանում նշված ոչ նյութական հիմնական միջոցների՝ համակարգչային ծրագրային ապահովումների ընթացիկ սպասարկման նպատակով ձեռք են բերվել 778,814.00 հազ. դրամ ընդհանուր գումարով ծառայություններ:

- Հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ ծախսերով ձեռք են բերվել 8,208.20 հազ. դրամ ընդհանուր գումարով համակարգչային լիցենզիաներ, այն դեպքում, երբ դրանք բյուջետային ծախսերի դասակարգումների համաձայն դասվում են ոչ նյութական հիմնական միջոցներին: Արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունում «423200 Համակարգչային ծառայություններ» և «513200 Ոչ նյութական հիմնական միջոցներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշների 8,208.20 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

³ Հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրումները ներառված են ընթացիկ եզրակացությունների «խեղաթյուրումներ» բաժնի «խեղաթյուրումներ, որոնք չունեն ազդեցություն Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա» ենթաբաժնում, քանի որ դրանք օրենսդրության համաձայն ազդեցություն չեն կարող ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով (27-րդ հոդված) Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ներառյալ կարծիքը, ներկայացնում է կառավարության կողմից ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ: «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝ «պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ»:

- Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից ձեռք բերված 219,000.00 հազ. դրամի սարքերի և սարքավորումների նորոգման ու պահպանման ծառայությունները «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն դասակարգվել (պլանավորվել), վճարվել և հաշվետվություններում արտացոլվել են «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով: Նշված ծառայությունների մասով դրամարկղային ծախսը կազմել է 16,866.00 հազ. դրամ: Արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունում «423200 Համակարգչային ծառայություններ» և «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշների 16,866.00 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ⁴

Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության նպատակով Նախարարությունից ստացվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

Արձանագրված անհամապատասխանությունների մանրամասները և դրա արդյունքում ֆինանսական հաշվետվություններում առանձին ցուցանիշների՝ 2,202,774.44 հազ. դրամ ընդհանուր գումարով խեղաթյուրումները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության համապատասխանաբար՝ IV-րդ բաժնի 4.1.- 4.7. և V-րդ բաժնի 5.1.- 5.5. կետերում:

Հետիսկողական գործընթացի շրջանակում Նախարարության կողմից ներկայացվել է «ՆԳՆ 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ միջոցառումների ծրագիր» և տեղեկատվություն անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման ընթացքի վերաբերյալ: Մանրամասները ներկայացված են VI-րդ [«Հետիսկողական գործընթաց»](#) բաժնում:

⁴ Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնում է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:

Գեղամ Հովեյան
Հաշվեքննիչ պալատի անդամ



Ստորագրություն

«30» Հունվարի 2025 թվական
Հաշվեքննիչ պալատ
Մ.Բաղդասարյան 19, ք.Երևան
Հայաստանի Հանրապետություն

III.ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախարարության, որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների պլանով նախատեսվել է 67,645,160.50 հազար դրամի ծախս, ճշտված պլանը կազմել է 73,042,482.55 հազար դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 63,943,303.39 հազար դրամ, փաստացի ծախսը՝ 65,805,721.33 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 87.5 %, ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի ծախսերի ինն ամիսների ցուցանիշները

(Հազար դրամ)

Ծրագիր		Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
ԸՆԴԱՄԵՆԸ		67,645,160.50	73,042,482.55	63,943,303.39	65,805,721.33
1045	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	73,699.00	73,699.00	73,699.00	73,699.00
1070	Աջակցություն փախստականների ինտեգրմանը	-	-	-	344,776.32
1090	Փրկարարական ծառայություններ	9,843,649.10	9,677,608.91	8,834,529.98	8,863,611.33
1101	ՆԳՆ կրթական ծառայություններ	1,178,745.00	561,384.00	360,627.30	360,627.30
1110	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	540.00	540.00	540.00	540.00
1111	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	30,285.20	30,285.20	30,285.20	30,285.20

1234	Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	56,518,242.20	62,698,965.44	54,643,621.91	56,132,182.18
------	--	---------------	---------------	---------------	---------------

Նախարարության կողմից վերահսկվող մուտքեր (եկամուտներ)

Նախարարության կողմից 2024 թվականի ինն ամիսների ընթացքում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողականի մասին հաշվետվության համաձայն՝ պլանային ցուցանիշը նախատեսվել է 26,328,538.70 հազ. դրամ, որի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 27,357,847.00 հազ. դրամ, որը գերազանցում է պլանային ցուցանիշը 1,029,308.30 հազ. դրամով կամ 3.9 %-ով: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի մուտքերի ցուցանիշները ներկայացվում են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Նախարարության 2024 թվականի ինն ամիսների ընթացքում գանձված պետական տուրքերի և այլ եկամուտների կատարողական

(Հազար դրամ)

Բյուջետային եկամուտների դասակարգման տարրերի անվանումները	2024թ առաջին կիսամյակի		Շեղում (կատարողական-պլան)	
	Ծրագրային ցուցանիշներ	Ստացված եկամուտներ,	Գումարով	%-ով
Պետական տուրքեր	7,639,438.00	7,903,938.20	264,500.20	3.50%
Այլ եկամուտներ	18,689,100.70	19,453,908.80	764,808.10	4.1%
Ընդամենը ընթացիկ եկամուտներ	26,328,538.70	27,357,847.00	1,029,308.30	3.9%

IV. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրային միջոցառման 463900 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջեային ու հանրային հապվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացվող ընթացիկ դրամաշնորհների գծով ծախսերի դասակարգման համար նախատեսված է «463700 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածը:

Նախարարության և «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) միջև 2024 թվականի հունվարի 11-ին կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիրը՝ գումարով 3,210,000.00 հազ. դրամ: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացվել է 2,170,000.00 հազ. դրամ:

Վերոնշյալ գումարը հատկացվել է «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման «463900 Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ «463700 Ընթացիկ դրամաշնորհներ

պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածի փոխարեն:

Նախարարության բացառությունը

Ընդունվել է: Քանի որ խեղաթուրումը ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրվել է 18.07.2024 թվականի թիվ 75-Ա որոշմամբ, իսկ բյուջետային գործընթացը սկսելու ՀՀ վարչապետի 24.01.2024 թվականի թիվ 71-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն ՀՀ ՆԳՆ 2025-2027 թթ ՄԺԾԾ և 2025 թվականի բյուջետային հայտը ներկայացվել է 07.03.2024 թվականին, հետևաբար նշված ուղղությամբ միջոցները 2025 թվականի համար նախատեսվել են նույն հոդվածով: Շտկումները հնարավոր կլինի իրականացնել սույն թվականի ընթացքում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 71-Ա որոշման հավելվածով հաստատված ժամանակացույցի 33-րդ կետի համաձայն՝ հայտատու մարմինների՝ 2025 թվականի բյուջետային ֆինանսավորման վերանայված հայտերի տրամադրումը (վերանայված բաղադրիչների մասով) սահմանված է մինչև 2024 թվականի օգոստոսի 7-ը:

4.2 Պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի հիմնավորվածությունը

4.2.1. Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի նկատմամբ՝ այն է՝ «Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը»:

4.2.2. Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության

օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» թիվ 142-Ա հրամանի հավելվածի 7.7-րդ կետով սահմանված պահանջների կատարման նկատմամբ, այն է՝ մարդատար ավտոմեքենայի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի (այսուհետ՝ ավտոմեքենայի) վառելիքի (բենզին, դիզելային վառելիք, հեղուկ գազ) ծախսումը փաստաթղթավորվում է «Մարդատար ավտոմեքենայի, ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի երթուղային թերթիկով»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի և մարզային պարեկային ծառայությունների տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի վերաբերյալ սկզբնական հաշվառման փաստաթղթեր՝ երթուղային թերթիկներ չեն լրացվել՝ բացառությամբ պարեկային ծառայության ղեկավար կազմին ամրակցված 15 տրանսպորտային միջոցների: Ամսվա կտրվածքով վառելիքի ծախսը և կատարված վազքի տվյալները ներկայացվել են հաշվետվությամբ՝ ներառելով ծառայության տեսակը, ամսվա համար ստացված վառելիքի քանակը, պետ. համարանիշը և ըստ աշխատանքային օրերի ընդհանուր թվի կատարված վազքը: Ըստ հաշվետվությունների, 2024 թվականի ինն ամիսների ընթացքում պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը կազմել է 1,353,213.81 հազ. դրամ, որից Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը՝ 268,059.48 հազ. դրամ, մարզային պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը՝ 1,085,154.33 հազ. դրամ:

Այսպիսով, վերոնշյալ ծառայությունների հաշվետու ժամանակաշրջանի բենզինի փաստացի ծախսի հաշվետվական ցուցանիշները հիմնավորված չեն երթուղային թերթիկներում, ժամանակաշրջանի սկզբի և ավարտի դրությամբ պարտադիր լրացման ենթակա վազքի ցուցիչների (կմ) տվյալներով:

Նախարարության բացառությունը

Պարեկային ծառայության մեքենաների համար երթուղային թերթիկներ չեն լրացվել, քանի որ ամսվա ընթացքում մեկ պարեկային ավտոմեքենան շահագործվում է 10 և ավելի պարեկների կողմից: Միաժամանակ հարկ է նշել, որ երթուղային թերթիկում բացի տրանսպորտային միջոցի մակնիշից, պետհամարանիշից և այլն, նշվում է նաև տիրապետողի (վարողի) տվյալները, և հաշվի առնելով վերը նշվածը, անհրաժեշտություն է առաջացել երթուղային թերթիկների ձևաչափի վերանայման և լրացման ուղղությամբ

(թերթիկներում չի նշվի միայն վարողի տվյալները, այլ թերթիկների հետ կկցվի տեղադիրներից ստացված քաղվածքը):

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Օրենսդրության համաձայն, կատարված ցանկացած ծախս պետք է հիմնավորվի՝ սահմանված կարգով, ժամկետում և պարտադիր վավերապայմաններով կազմված սկզբնական հաշվառման փաստաթղթերով: Տվյալ դեպքում, տրանսպորտային միջոցների հեղուկ վառելիքի ծախսը հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված երթուղային թերթիկներն են:

4.3 Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի ճանաչում

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտով» սահմանված ծախսերի ճանաչման (ստանդարտի 2.47 և 2.48 կետեր) պահանջների նկատմամբ, համաձայն որի ֆինանսական հաշվետվությունում ծախսերը պետք է ճանաչվեն, երբ առաջացել է ապագա փոփոխական օգուտների կամ օգրակար պոտենցիալի նվազում՝ կապված ակտիվի նվազման կամ պարտավորության աճի հետ, որը կարող է արժանահավատորեն չափվել: Չափումը այն դրամային գումարի որոշման գործընթացն է, որով տվյալ դեպքում ծախսերը ճանաչվում և գրանցվում են ֆինանսական հաշվետվություններում:

Նախարարության տնտեսական վարչության վառելիքաքսայուղերի ինն ամիսների ծախսի հաշվետվությունների համաձայն, Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների շահագործման նպատակով ելքագրվել և ծախս է ճանաչվել 557,570 լիտր պրեմիում տեսակի բենզին: Նշված քանակի բենզինի ծախսը արտացոլվել է նաև Նախարարության պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունում: Սակայն, ըստ Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի հաշվետվությունների, 2024 թվականի ինն ամիսների վառելիքի ծախսը կազմել է 546,855 լիտր կամ ելքագրված և ծախս ճանաչված բենզինից 10,715 լիտրով:

պակաս /557,570-546,855/, որը հիմնավորվում է բենզինի նույն ժամանակաշրջանի շարժով և մնացորդներով:

Նախարարության բացառությունը

Երևան քաղաքի պարեկային ծառայությանն ամրակցված «Շկոդա Օկտավիա» մակնիշի ավտոմեքենաների համար 2024թ. 9 ամիսների համար ՀՀ ՆԳՆ ՏՎ ավտոտնտեսությունից ելքի կարգադրություններով հատկացվել է 557,570 լիտր «Պրեմիում» տեսակի բենզին: 9 ամիսների համար հաշվետվություններով ծախս է ցույց տրվել 546,855 լիտր «Պրեմիում» տեսակի բենզին: 9 ամիսների համար տարբերությունը կազմում է 557,570լ-546,855լ. = 10,715լ. բենզին, որը ծախսվել է հետագա ամիսների համար:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Անհամապատասխանության և դրա արդյունքում ֆինանսական հաշվետվության ցուցանիշի խեղաթյուրման արձանագրումը վերաբերում է ավարտված ժամանակահատվածին՝ 2024 թվականի 9-ը ամիսներին, իսկ Նախարարության բացառությունով պարզաբանվում է արձանագրված մնացորդի՝ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածից հետո օգտագործումը:

4.4 1234-11001, 1234-11005, 1234-11006, ծրագրային միջոցառումների «423200 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

4.4.1. Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների նախարարի 2014թ. հոկտեմբերի 24-ի թիվ 725-Ն հրամանով «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» հավելվածի 2.36 կետով ֆինանսական հաշվեքննություններում ոչ նյութական ակտիվների ճանաչման սահմանված պահանջների նկատմամբ այն է՝ «....Ճանաչումը ֆինանսական հաշվեքննություններում այն հոդվածները ներառելու գործընթացն է, որոնք բավարարում են ակտիվի, սահմանմանը և բավարարում են հետևյալ չափանիշները.

1) հավանական է, որ հողվածի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսի կազմակերպություն

2) հողվածն ունի սկզբնական արժեք (ինքնարժեք) կամ արժեք, որը կարող է արժանահավատորեն չափվել»:

4.4.2. Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջի նկատմամբ, այն է՝ «Գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են բյուջերային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հողվածներով: Արգելվում է ֆինանսական միջոցներ նախատեսել բյուջերային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ հողվածներով, եթե այդ միջոցների հաշվին պետք է կատարվեն գնումներ»:

4.4.3. Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջերային դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 17-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար նախատեսված է «513200 Ոչ նյութական հիմնական միջոցներ» տնտեսագիտական դասակարգման հողվածը:

2024 թվականի կարիքների համար «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հողվածով Նախարարության կողմից կնքվել են ծրագրային ապահովման, այդ թվում՝ օժանդակ (արդիականացման) և սպասարկման ծառայությունների 8 գնման պայմանագիր, ընդհանուր գումարով՝ 778,814.00 հազ. դրամ, լիցենզիաների ձեռքբերման 2 պայմանագիր, գումարով՝ 8,208.20 հազ. դրամ և սերվերների արդիականացման ու սպասարկման ծառայությունների գնման 2 պայմանագիր, գումարով՝ 223,732.80 հազ.դրամ (ներկայացված է Աղյուսակ 3-ում):

Աղյուսակ 3

**Նախարարության «423200՝ Համակարգչային ծառայություններ»
տնտեսագիտական դասակարգման հողվածով ձեռքբերումները**

(Հազար դրամ)

Հ/Հ	Պայմանագրեր	Գնման առարկա	Քանակ /հատ/	Պայմանագրի գումար	Վճարված գումար
1	ԼԻՑ/2024	Լիցենզիաների ձեռքբերում	1	1,219.20	993.63
	ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2024/600E		2	6,989.00	0.00
	Ընդամենը			8,208.20	993.63
2	ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-ՕԿԿ/Ժամկետը՝ 3տարի/	Ծրագրերի արդիականացման սպասարկման ծառայություններ	1	590,400.00	49,500.00
	ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-MULBERRY		1	6,504.00	2,276.40
	ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-ԾԱ-2024/Ա-60		1	99,000.00	99,000.00
	ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-ԾԱՄ-2024/Ա-30		1	17,815.00	8,290.15
	ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-ԾԱՄ-2024/Ա-41		1	37,200.00	26,040.00
	ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-ԾԱՄ-2024/Ա-42		1	960.00	0.00
	ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2024ԷԼՈՒԵԳ		1	26,935.00	16,161.00
	Ընդամենը			778,814.00	201,267.55
3	ՀՀ ՆԳՆ ԷԱԾՁԲ-2024ՄՔԾ25-1	Սարքավորումների ծրագրային սպասարկում	1	20,932.80	13,955.20
	ՀՀ Ո ՔՄԾՁԲ-2023ԾՈ/HPE Ժամկետը՝ 3տարի/		1	202,800.00	33,800.00
	Ընդամենը			223,732.80	47,755.20
	Ընդամենը 4232՝ համակարգչային ծառայություններ			1,010,755.00	250,016.38

Հաշվեքննությամբ պարզվել է, որ.

- Նախարարության տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներ իրենց գործառույթները տարիներ շարունակ իրականացնում են նախորդ տարիների ընթացքում ձեռքբերված համապատասխան ծրագրային ապահովումների միջոցով, որոնք դրանց ձեռքբերման և շահագործման ընթացքում որպես ոչ նյութական հիմնական միջոցներ չեն ճանաչվել և

հաշվապահական հաշվառմամբ չեն հաշվառվել: Փաստորեն, վերոնշյալ 8 պայմանագրով՝ 778,814.00 հազ. դրամ տարեկան ընդհանուր գումարով ծառայությունները մատուցվում են հաշվապահական հաշվառման մեջ չարտացոլված ոչ նյութական հիմնական միջոցների ընթացիկ սպասարկման նպատակով:

- Վերը նշված 2 պայմանագրով 8,208.20 հազ. դրամ գումարով լիցենզիաները ձեռք են բերվել ի հաշիվ ընթացիկ ծախսերի, այն դեպքում երբ դրանք որպես ոչ նյութական հիմնական միջոցներ պետք է ձեռք բերվեին ի հաշիվ «513200 Ոչ նյութական հիմնական միջոցներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի (կապիտալ ծախսերով) և հաշվապահական հաշվառմամբ հաշվառվեին որպես ոչ նյութական հիմնական միջոցներ:

Նախարարության բացառությունը

1-ին և 3-րդ ենթակետերի դիտողությունների հիմքով համապատասխան ստորաբաժանումներին տրվել են հանձնարարականներ ուսումնասիրել ոչ նյութական հիմնական միջոցների ճանաչման հիմքերը՝ իրականացնել արժեքի գնահատում, անհրաժեշտության դեպքում՝ վերագնահատում և այլն:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

1-ին և 3-րդ կետերի վերաբերյալ ներկայացված արձագանքը ընդունվել է ի գտություն:

4.5 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրային միջոցառման «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

4.5.1. Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջի նկատմամբ, այն է՝ «Գնումներ

կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են բյուջեյային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հոդվածներով: Արգելվում է ֆինանսական միջոցներ նախատեսել բյուջեյային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ հոդվածներով, եթե այդ միջոցների հաշվին պետք է կատարվեն գնումներ»:

4.5.2. Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջեյային դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի համար նախատեսված է «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածը:

Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից կնքվել է թիվ «ՀՀ ՌԳՀԾԲ-2023/2025» ծածկագրով գնման պայմանագիրը, գումարով՝ 219,000.00 հազ.դրամ: Պայմանագրով նախատեսվել և փաստացի ձեռք են բերվել տարբեր սարքերի և սարքավորումների նորոգման ու պահպանման ծառայություններ:

Վերոնշյալ գումարը հատկացվել է «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածի փոխարեն: Նշված ծառայությունների մասով դրամարկղային ծախսը կազմել է 16,866.00 հազ.դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից կնքվել է թիվ «ՀՀ ՌԳՀԾԲ-2023/2025» ծածկագրով գնման պայմանագիրը, գումարով՝ 13,300.00 հազ.դրամ: Պայմանագրով նախատեսվել և փաստացի ձեռք են բերվել տարբեր սարքերի և սարքավորումների նորոգման ու պահպանման ծառայություններ:

Վերոնշյալ գումարը հատկացվել է «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ,

մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածի փոխարեն: Նշված ծառայությունների մասով հաշվետու ժամանակաշրջանում ծախս չի կատարվել:

Նախարարության բացառությունը

Ընդունվել է: ՀՀ ՆԳՆ և «Ալիկանտե» ընկերության հետ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2023/2025 ծածկագրով կնքված պայմանագիրը շարունակական է, որի ավարտից հետո նշված ծառայության ձեռքբերումը կիրականացվի Ձեր դիտողությամբ ներկայացված հոդվածով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ընդունվել է ի գիտություն:

4.6 1234-11005 «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում, տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» ծրագրային միջոցառման «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

4.6.1. Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջի նկատմամբ, այն է՝ «Գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են բյուջերային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հոդվածներով: Արգելվում է ֆինանսական միջոցներ նախատեսել բյուջերային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ հոդվածներով, եթե այդ միջոցների հաշվին պետք է կատարվեն գնումներ»:

4.6.2. Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջերային դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն

ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված է «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածը:

Նախարարության 2024 թվականի կարիքների համար Երևանի հաշվառման-քննական բաժնի և Կոտայքի հաշվառման-քննական բաժնի՝ տրանսպորտային միջոցների գրանցման-հաշվառման և վարորդական վկայականների հատկացման գործընթացների ժամանակ հերթերի ավտոմատ կառավարման համակարգի վարձակալության հիմունքներով ներդրում, շահագործում և սպասարկում ծառայությունների ձեռքբերման համար կազմակերպվել է թիվ «ՆԳՆ ԳՀԾՁԲ-2024ՀԵՐԹ/ՃՈ» ծածկագրով գնման ընթացակարգը, որի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 15-ին «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼ» ՍՊԸ-ի հետ կնքվել է 4,900.00 հազ. դրամի թիվ «ՆԳՆ ԳՀԾՁԲ-2024ՀԵՐԹ/ՃՈ» ծածկագրով գնման պայմանագիրը:

Նախարարության կողմից հերթերի ավտոմատ կառավարման համակարգի վարձակալության հիմունքներով ներդրում, շահագործում և սպասարկում ծառայությունների ծախսերը կատարվել են «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն: Նշված ծառայությունների մասով դրամարկղային ծախսը կազմել է 2,450.00 հազ.դրամ:

Նախարարության բացառությունը

Ձեռք բերված ծառայությունը ներառում է մոնիտորների, հերթի կառավարման սարքավորումների թե վարձակալության և թե դրանց սպասարկման ձեռքբերում, ուստի այն ձեռք է բերվել «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» հոդվածով: 2025թ. դեռևս գնման գործընթաց չի սկսվել և նախատեսվում է իրականացնել գնման առարկայի փոփոխություն:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ընդունվել է ի գիտություն:

4.7 Նախարարության գնման պայմանագրերի կատարման փաստաթղթերի հրապարակումը

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման N° 1 հավելվածի 110-րդ կետով սահմանված պահանջների նկատմամբ, համաձայն որի «....Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝ 1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պարզիրարուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պարզիրարուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.....»:

Հաշվետու ժամանակահատվածում կնքված պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունները և հարկային հաշիվները ամբողջությամբ հրապարակված չեն գնումների էլեկտրոնային armeps.am-ում համակարգում: Նշված անհամապատասխանությունն արձանագրվել էր նաև նախորդ հաշվեքննությունների շրջանակներում: Նախարարության կողմից անհամապատասխանությունն ամբողջությամբ վերացված չէ:

Նախարարության բացառությունը

Ընդունվել է ի գիտություն: Տրվել են հանձնարարականներ և աշխատանքներ են տարվում հանձնման-ընդունման արձանագրությունները և հարկային հաշիվները էլեկտրոնային armeps.am համակարգում հրապարակելու ուղղությամբ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ընդունվել է ի գիտություն:

V. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ

❖ *Խեղաթյուրումներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կադարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա*

5.1. 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրային միջոցառման 463900 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

Սույն արձանագրության IV բաժնի [4.1.](#) կետում արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների ծախսերի կադարման հաշվետվությունում «463900 Այլ ընթացիկ դրամաշնորհներ» և «463700 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշի 2,170,000.00 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

5.2. 1234-11001, 1234-11005, 1234-11006 ծրագրային միջոցառումների «423200 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

Սույն արձանագրության IV բաժնի [4.4.](#) կետում արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների ծախսերի կադարման հաշվետվությունում «423200 Համակարգչային ծառայություններ» և «513200 Ոչ նյութական հիմնական միջոցներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշի 8,208.20 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

5.3. 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրային միջոցառման «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

Սույն արձանագրության IV բաժնի [4.5.](#) կետում արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների ծախսերի կատարման հաշվեկշիռայինում «423200 Համակարգչային ծառայություններ» և «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշի 16,866.00 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

5.4. 1234-11005 «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում, տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» ծրագրային միջոցառումների «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր

Սույն արձանագրության IV բաժնի [4.6.](#) կետում արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների ծախսերի կատարման հաշվեկշիռայինում «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» և «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշի 2,450.00 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

❖ *Խեղաթյուրումներ, որոնք չունեն ազդեցություն Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա⁵*

5.5. Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի ճանաչում

Սույն արձանագրության IV բաժնի [4.3](#) կետում արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների ծախսերի կատարման հաշվետվությունում «426400 Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսերի համապատասխան ցուցանիշի 5,250.24 /10,715x489.99/ հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման:

⁵ Տես 3-րդ ծանոթագրությունը

VI. ՀԵՏՀԱԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Nº	Առաջարկություն ⁶	Ընդունելի է/ Ընդունելի չէ ⁷	Կատարված է/ Ընթացքում է ⁸	Հիմնավորումներ ⁹	Հաշվեքննողների մեկնաբանությունը
1	Գնման պայմանագրերի կատարմանը վերաբերող փաստաթղթերը գնումների էլեկտրոնային համակարգում (armeps.am) հրապարակելու ուղղությամբ՝ ներառյալ հանձնման-ընդունման արձանագրությունները և դրանք հիմնավորող կատարողական այլ փաստաթղթերը:	Ընդունվել է	Ընթացքում է	-	Փաստաթղթերի հրապարակման հետ կապված խնդիրը արձանագրվել է նաև 2024 թվականի պետական բյուջեի երեք, վեց ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում: Հետևաբար, առաջարկությունը դեռևս արդիական է:
2	Շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վառելիքի փաստացի ծախսը, սկզբնական հաշվառման փաստաթղթերում՝	Ընդունվել է	Ընթացքում է	Տրվել են համապատասխան հանձնարարականներ	Տվյալ հարցի հետ կապված խնդիրը արձանագրվել է նաև 2024 թվականի պետական բյուջեի երեք, վեց ամիսների

⁶ Ներկայացնել առաջարկության բովանդակությունը /լրացվում է հաշվեքննողների կողմից/:

⁷ Ընտրել երկու տարբերակներից մեկը՝ համապատասխանաբար, առաջարկությունն ընդունելի կամ ոչ ընդունելի լինելու դեպքում /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

⁸ Լրացվում է միայն ընդունելի առաջարկությունների դեպքում՝ ընտրելով երկու տարբերակներից մեկը՝ համապատասխանաբար, ամբողջությամբ կատարված լինելու և դեռևս կատարման ընթացքում լինելու դեպքում /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

⁹ Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները, պարզաբանումներ չընդունման և չկատարման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ Հաշվեքննիչ պալատի ներկայացրած առաջարկությունների կատարման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով /լրացվում և ներկայացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

	երթուղային թերթիկներում օրական կամ ամսական վազքի ցուցմունքների հիման վրա ճանաչելու և ձևակերպելու ուղղությամբ:				կատարման հաշվեքննության շրջանակներում: Հետևաբար, առաջարկությունը դեռևս արդիական է:
3	Ապահովել Նախարարությունում ներքին աուդիտի համակարգը:	Ընդունվել է	Ընթացքում է	2024 թվականին մեկանգամյա աուդիտի ձեռքբերման նպատակով «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով «Քրոու ընդ Ասատրյան» ՍՊԸ-ի հետ կնքվեց պայմանագիր՝ 79 500.0 հազ դրամի չափով: Սակայն, լրացուցիչ ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված, վերոնշյալ ծառայությունը ձեռք չբերվեց:	Առաջարկությունը դեռևս արդիական է:
4	Հետևողականություն ցուցաբերել Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ միջոցառումների ծրագրով նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում իրագործելու ուղղությամբ:	Ընդունվել է	Ընթացքում է	Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով տրվել են հանձնարարականներ:	Ընդունվել է ի գիտություն:

№	Անհամապատասխանություն/ խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ	Հաշվեքննողի մեկնաբանությունը
1	1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման շրջանակներում «463900 Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր			
	Առկա է խեղաթյուրում «463900 Այլ ընթացիկ դրամաշնորհներ» և «463700 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի մասով՝ 1,170,000.00 հազ. դրամ գումարի չափով:	Ընթացքում է	Ընդունվել է ի գիտություն: Կկատարվի հոդվածային վերաբաշխում:	Նույնաբովանդակ անհամապատասխանություն արձանագրվել է նաև 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում:
2	1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման շրջանակներում «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր			
	Առկա է խեղաթյուրում «423200 Համակարգչային ծառայություններ» և «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման	Ընթացքում է	Ընդունվել է ի գիտություն: 2025թ. համար կկատարվի հոդվածային վերաբաշխում:	Նույնաբովանդակ անհամապատասխանություն արձանագրվել է նաև 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման

	հողվածներով կատարված ծախսերի մասով՝ 9,838.50 հազ.դրամ գումարի չափով:			հաշվեքննության շրջանակներում:
3	Ուղևորափոխադրող ավտոմեքենաների (վարորդի հետ միասին) վարձակալության ծառայությունների ձեռքբերում			
	Առկա է խեղաթյուրում «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» և «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հողվածներով կատարված ծախսերի մասով՝ 68,680.00 հազ.դրամ գումարի չափով:	Վերացված է	Ընդունվել է ի գիտություն: 2024թ. ընթացքում իրականացված ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի ծախսերը կատարվել են «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հողվածով:	Նշված ծառայությունների նոր ձեռքբերումները կատարվում են «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հողվածով:
4	Հերթերի ավտոմատ կառավարման համակարգի վարձակալության ծառայությունների ձեռքբերում			
	Առկա է խեղաթյուրում «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» և «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հողվածներով կատարված ծախսերի մասով՝ 1,225.00 հազ.դրամ գումարի չափով:	Ընթացքում է	Ընդունվել է ի գիտություն:	Նույնաբովանդակ անհամապատասխանություն արձանագրվել է նաև 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում:
5	Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի ճանաչում			
	Առկա է խեղաթյուրում «426400 Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հողվածով կատարված ծախսերի	Ընթացքում է	ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի կողմից տրվել է հանձնարարական պարեկային նշանակության ավտոտրանսպորտային	Նույնաբովանդակ անհամապատասխանություն արձանագրվել է նաև 2024

	մասով՝ 26,478.57 հազ. դրամ /54,039x489.99/ գումարի չափով:		միջոցների երթուղային թերթիկները սահմանված կարգով լրացնելու ուղղությամբ:	թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում:
--	--	--	--	--

VII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախարարությանը՝ միջոցներ ձեռնարկել.

- 1) Նախարարության տարբեր ստորաբաժանումների կողմից շահագործվող ոչ նույթական հիմնական միջոցները (համակարգչային ապահովման ծրագրերը, համակարգչային լիցենզիաները) հաշվապահական հաշվառմամբ արտացոլելու համար:
- 2) Շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վառելիքի փաստացի ծախսը, սկզբնական հաշվառման փաստաթղթերում՝ երթուղային թերթիկներում օրական կամ ամսական վազքի ցուցմունքների հիման վրա ճանաչելու, ձևակերպելու և հիմնավորվածությունը ապահովելու ուղղությամբ:
- 3) Բյուջետային ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համապատասխան հոդվածների հաշվառելու ուղղությամբ:
- 4) Սույն ընթացիկ եզրակացությունում բերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և/կամ այլ փաստերով ներկայացված խնդիրների վերացման/շտկման նպատակով մշակել և հաստատել միջոցառումների/գործողությունների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու պաշտոնատար անձ և միջոցառման կատարման իրատեսական ժամանակացույց՝ պատճենը ներկայացնելով Հաշվեքննիչ պալատ: